***Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:***

***4. <u>Հայցի ապահովման միջոցի վերացման հարցը.</u>***

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ::*

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին:*

Տվյալ դեպքում Դատարանը 04.12.2023 թվականի որոշմամբ բավարարել է հայցվորի կողմից ներկայացված միջնորդությունը՝ պարտավորեցնելով ՀՀ ֆինանսների նախարարությանը <<ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ>> ՍՊԸ-ին հանել www.gnumner.am կայքում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից:

Հետևաբար հայցը բավարարելու պայմաններում Դատարանը հանգում է այն եզրակացության, որ Դատարանի 04.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանվեն մինչև վճռի կատարումը:

***5. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.***

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝* ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

**IV**

**(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)**

*Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը*

**Վ Ճ Ռ Ե Ց**

1. <<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի՝ 25.09.2023 թվականի Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի առաջին տեղակալի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 968-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել <<ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի ղեկավարի 25.09.2023 թվականի թիվ 968-Ա որոշումը:

2. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքապետարանից հօգուտ <<ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 04.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Ա. ՕՀԱՆՅԱՆ**